



ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀՀ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք



Բովանդակություն

ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ	4
Երևան	4
Գյումրի	11
Վանաձոր	13
Ալավերդի	14
Հրազդան	15
Հանրապետության տարբեր բնակավայրեր	20
ՄՍԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՄՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐ	21
Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք	21
Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածք	25
Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք	30
Սևանի ջրավազանային կառավարման տարածք	35
Արարատյան ջրավազանային կառավարման տարածք	38
Հարավային ջրավազանային կառավարման տարածք	43
Արաքս գետ	47
Սևանա լիճ	48
Ծաղկաձորում շրջակա միջավայրի որակի մոնիթորինգ	53
«Եվրոպայի մեծ հեռավորությունների վրա անդրսահմանային աղտոտիչների տարածման դիտարկումների և գնահատման համատեղ ծրագիր (EMEP)»	59
Հավելված 1. ՀՀ գետերի ջրի քիմիական որակը 2017թ. 2-րդ եռամսյակում	60
Հավելված 2. ՀՀ ջրամբարների ջրի քիմիական որակը 2017թ. 2-րդ եռամսյակում	84
Հավելված 3. Արաքս գետի ջրի որակի մոնիթորինգի արդյունքները 2017թ. 2-րդ եռամսյակում	86
Ստորերկրյա ջրերի դիտակետերի բնութագրիչ	89
Մակերևութային ջրերում որոշվող ցուցանիշների ցանկ	94
Տեղումներում որոշվող ցուցանիշների ցանկ	95
Մթնոլորտային օդում աղտոտիչների սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները ...	96
Էկոլոգիական նորմեր	97
Մակերևութային ջրերի ձկնատնտեսական ՄԹԿ-ներ	98
«Արտակարգ բարձր աղտոտվածություն» և «բարձր աղտոտվածություն» արտահայտությունների սահմանումը	99

ՀՀ մթնոլորտային օդի, մակերևութային ջրերի, ստորերկրյա քաղցրահամ ջրերի որակի մոնիթորինգի դիտացանց



ՄԹՆՈՒՈՐՏՍԱՅԻՆ ՕՂ

2017թ. 2-րդ եռամսյակում մթնոլորտային օդի որակի դիտարկումներ կատարվել են հանրապետության Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Չարենցավան, Կապան, Քաջարան, Մարտունի քաղաքներում և Սյունիք գյուղական համայնքում: Ընդհանուր առմամբ վերը թվարկված բնակավայրերում գործում է պասիվ նմուշառման 210 դիտակետ և 16 ստացիոնար դիտակայան, որոնցից 6 ստացիոնար դիտակայանում (Երևան և Ալավերդի քաղաքներում) կատարվում են շուրջօրյա ավտոմատ դիտարկումներ: Մթնոլորտն աղտոտող նյութերի պարունակությունները որոշելու համար ապրիլ, մայիս, հունիս ամիսներին շուրջօրյա ակտիվ նմուշառմամբ վերցվել է օդի 4507 փորձանմուշ: Հանրապետության 11 բնակավայրի պասիվ նմուշառման դիտակետերից վերցվել է օդի 4926 փորձանմուշ: Երևան և Ալավերդի քաղաքներում տեղադրված ավտոմատ կայաններում կատարվել է օդի՝ համապատասխանաբար 92973 և 36721 դիտարկում:

Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Չարենցավան, Կապան, Քաջարան, Մարտունի, Ծաղկաձոր քաղաքների և Սյունիք գյուղական համայնքի մթնոլորտում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական և միջին շաբաթական կոնցենտրացիաների բաշխվածության քարտեզները հասանելի են <http://www.armmonitoring.am/> ինտերնետային կայքում:

Երևան

Երևան քաղաքում կատարվում են ընդհանուր փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի և գետնամերձ օզոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է պասիվ նմուշառման 44 դիտակետ և յոթ դիտակայան (№1, №2, №7, №8, №16-1 №18 և №19), որից երկուսում՝ №2 և №18 կատարվում են միայն ակտիվ (24-ժամյա), իսկ մնացած հինգ դիտակայանում (№1, №7, №8, №16-1 և №19)՝ ինչպես ակտիվ, այնպես էլ ավտոմատ դիտարկումներ:

2017թ. 2-րդ եռամսյակում ակտիվ նմուշառմամբ վերցվել է օդի 2533, պասիվ նմուշառմամբ՝ 1087 փորձանմուշ: Ավտոմատ եղանակով կատարվել է ածխածնի մոնօքսիդի՝ 37211, ծծմբի երկօքսիդի՝ 48682, ազոտի օքսիդների՝ 7080 դիտարկում:

Որոշված միացությունների միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

Երևան քաղաքի մթնոլորտային օդի որակի 2017թ. 2-րդ եռամսյակում կատարված դիտարկումների արդյունքները (ակտիվ նմուշառում)

Ապրիլ

Որոշվող միացություն	ՍԹԿ (միջին օրական), մգ/մ ³	Միջին ամսական կոնցենտրացիա, մգ/մ ³	Առավելագույն կոնցենտրացիա, մգ/մ ³ (դիտակայանի համար)	ՍԹԿ-ից գերազանցումների քանակ
Ծծմբի երկօքսիդ	0.05	0.028	0.052 (դիտ. № 2)	2
Ազոտի երկօքսիդ	0.04	0.021	0.090 (դիտ. № 18)	20
Ընդհանուր փոշի	0.15	0.127	0.593 (դիտ. № 19)	40
Գետնամերձ օզոն	0.03	0.007	0.017 (դիտ. № 18)	-



Մայիս

Որոշվող միացություն	ՍԹԿ (միջին օրական), մգ/մ ³	Միջին ամսական կոնցենտրացիա, մգ/մ ³	Առավելագույն կոնցենտրացիա, մգ/մ ³ (դիտակայանի համար)	ՍԹԿ-ից գերազանցումների քանակ
Ծծմբի երկօքսիդ	0.05	0.028	0.068 (դիտ. № 7)	2
Ազոտի երկօքսիդ	0.04	0.029	0.084 (դիտ. № 7)	36
Ընդհանուր փոշի	0.15	0.153	0.772 (դիտ. № 19)	66
Գետնամերձ օզոն	0.03	0.009	0.042 (դիտ. № 18)	2



Հունիս

Որոշվող միացություն	ՍԹԿ (միջին օրական), մգ/մ ³	Միջին ամսական կոնցենտրացիա, մգ/մ ³	Առավելագույն կոնցենտրացիա, մգ/մ ³ (դիտակայանի համար)	ՍԹԿ-ից գերազանցումների քանակ
Ծծմբի երկօքսիդ	0.05	0.029	0.061 (դիտ. № 2)	9
Ազոտի երկօքսիդ	0.04	0.027	0.118 (դիտ. № 8)	49
Ընդհանուր փոշի	0.15	0.147	0.736 (դիտ. № 18)	74
Գետնամերձ օզոն	0.03	0.012	0.095 (դիտ. № 8)	8




Երևան քաղաքի մթնոլորտային օդում ընդհանուր փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.






Երևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները (ակտիվ նմուշառում)։



Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները (ակտիվ նմուշառում)։




Երևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը (պասիվ նմուշառում)






Պայմանանշաններ

- Պասիվ նմուշառման դիտակետեր
- Ակտիվ նմուշառման դիտակետեր
- Արդյունաբերական կետեր
- Ճանապարհներ և փողոցներ
- Երկաթգծեր
- Գետային ցանց
- Երևանի սահմանագիծ

Օծմբի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը ($մգ/մ^3$)




Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը (պասիվ նմուշառում)



Պայմանանշաններ

- Պասիվ նմուշառման դիտակետեր
- Ակտիվ նմուշառման դիտակետեր
- Արդյունաբերական կետեր
- Ճանապարհներ և փողոցներ
- Երկաթգծեր
- Գետային ցանց
- Երևանի սահմանագիծ

Ազոտի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը ($մգ/մ^3$)




Գյումրի

Գյումրի քաղաքում կատարվում են ընդհանուր փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում է ակտիվ նմուշառման մեկ դիտակայան և պասիվ նմուշառման 24 դիտակետ:

Ակտիվ նմուշառման եղանակով վերցվել է օդի 90, պասիվ նմուշառման եղանակով՝ 619 փորձանմուշ:

Ընդհանուր փոշու միջին ամսական կոնցենտրացիան ապրիլին գերազանցել է ՍԹԿ-ն 2.1, մայիսին՝ 4.8, հունիսին՝ 1.7 անգամ: Ծծմբի և ազոտի երկօքսիդների միջին ամսական կոնցենտրացիաները համապատասխան ՍԹԿ-ները չեն գերազանցել:



Գյումրի քաղաքի մթնոլորտային օդի որակի 2017թ. 2-րդ եռամսյակում կատարված դիտարկումների արդյունքները

Ապրիլ

Որոշվող միացություն	ՍԹԿ (միջին օրական), մգ/մ ³	Միջին ամսական կոնցենտրացիա, մգ/մ ³	Առավելագույն կոնցենտրացիա, մգ/մ ³
Ծծմբի երկօքսիդ	0.05	0.024	0.058
Ազոտի երկօքսիդ	0.04	0.013	0.035
Ընդհանուր փոշի	0.15	0.320	0.977

Մայիս

Որոշվող միացություն	ՍԹԿ (միջին օրական), մգ/մ ³	Միջին ամսական կոնցենտրացիա, մգ/մ ³	Առավելագույն կոնցենտրացիա, մգ/մ ³
Ծծմբի երկօքսիդ	0.05	0.027	0.061
Ազոտի երկօքսիդ	0.04	0.012	0.036
Ընդհանուր փոշի	0.15	0.721	2.378

Հունիս

Որոշվող միացություն	ՍԹԿ (միջին օրական), մգ/մ ³	Միջին ամսական կոնցենտրացիա, մգ/մ ³	Առավելագույն կոնցենտրացիա, մգ/մ ³
Ծծմբի երկօքսիդ	0.05	0.030	0.065
Ազոտի երկօքսիդ	0.04	0.018	0.049
Ընդհանուր փոշի	0.15	0.255	0.898

Վանաձոր

Վանաձոր քաղաքում կատարվում են ընդհանուր փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործում է ակտիվ նմուշառման երեք դիտակայան և պասիվ նմուշառման 24 դիտակետ:

Ակտիվ նմուշառման եղանակով վերցվել է օդի 819, պասիվ նմուշառման եղանակով՝ 623 փորձանմուշ:

Ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ապրիլին գերազանցել է ՍԹԿ-ն 1.5, մայիսին՝ 1.7 անգամ: Ազոտի երկօքսիդի և ընդհանուր փոշու միջին ամսական կոնցենտրացիաները համապատասխան ՍԹԿ-ները չեն գերազանցել:



* Հունիսին Վանաձոր քաղաքի ծծմբի երկօքսիդի (պասիվ նմուշառում) անալիզի արդյունքները չեն ներկայացվել տեխնիկական թերությունների պատճառով:


Ալավերդի

Ալավերդի քաղաքում կատարվում են ընդհանուր փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների և ածխածնի մոնօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործում է ակտիվ նմուշառման երեք դիտակայան և պասիվ նմուշառման 38 դիտակետ:

Ակտիվ նմուշառման եղանակով վերցվել է օդի 728, պասիվ նմուշառման եղանակով՝ 968 փորձանմուշ: Ավտոմատ դիտարկումների կայանում կատարվել է ածխածնի մոնօքսիդի 14131, ծծմբի երկօքսիդի՝ 15006, ազոտի օքսիդների՝ 7584 դիտարկում:

Ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ապրիլին գերազանցել է ՍԹԿ-ն 2.6 անգամ, մայիսին՝ 2.9 անգամ: Ընդհանուր փոշու միջին ամսական կոնցենտրացիան ապրիլին գերազանցել է ՍԹԿ-ն 2.5 անգամ, մայիսին՝ 1.2 անգամ: Ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

Ալավերդի քաղաքի մթնոլորտային օդում ածխածնի մոնօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները (ավտոմատ դիտարկումներ).



* Հունիսին Ալավերդի քաղաքի ծծմբի երկօքսիդի (պասիվ նմուշառում) անալիզի արդյունքները չեն ներկայացվել տեխնիկական թերությունների պատճառով:



Հրազդան

Հրազդան քաղաքում կատարվում են ընդհանուր փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործում է ակտիվ նմուշառման մեկ դիտակայան և պասիվ նմուշառման 17 դիտակետ:



Ակտիվ նմուշառման եղանակով վերցվել է օդի 247, պասիվ նմուշառման եղանակով՝ 434 փորձանմուշ:

Ընդհանուր փոշու միջին ամսական կոնցենտրացիան հունիսին գերազանցել է ՍԹԿ-ն 3.6 անգամ: Ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի և ազոտի երկօքսիդների կոնցենտրացիաների փոփոխությունները (ակտիվ նմուշառում).




Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը (պասիվ նմուշառում)




Պայմանանշաններ



-  Պասիվ նմուշառման դիտակետեր
-  Ակտիվ նմուշառման դիտակետեր
-  Արդյունաբերական կետեր
-  Ճանապարհներ և փողոցներ
-  Գետային ցանց
-  Բնակավայրերի սահման
-  Աղբյուրակ ջրամբար



Ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը ($մգ/մ^3$)




Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը (պասիվ նմուշառում)




Պայմանանշաններ

- Պասիվ նմուշառման դիտակետեր
- Ակտիվ նմուշառման դիտակետեր
- Արդյունաբերական կետեր
- Ճանապարհներ և փողոցներ
- Գետային ցանց
- Բնակավայրերի սահման
- Աղբյուրակ ջրամբար



Ազոտի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը ($մգ/մ^3$)




Արարատ



Արարատ քաղաքում կատարվում են ընդհանուր փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում է ակտիվ նմուշառման մեկ դիտակայան և պասիվ նմուշառման 12 դիտակետ:

Ակտիվ նմուշառման եղանակով վերցվել է օդի 90, պասիվ նմուշառման եղանակով՝ 310 փորձանմուշ:

Ընդհանուր փոշու միջին ամսական կոնցենտրացիան ապրիլին գերազանցել է ՍԹԿ-ն 1.5, մայիսին՝ 1.2 անգամ: Հունիսին ընդհանուր փոշու միջին ամսական կոնցենտրացիան չի գերազանցել ՍԹԿ-ն: Ծծմբի և ազոտի երկօքսիդների միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:



Արարատ քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի և ազոտի երկօքսիդների կոնցենտրացիաների փոփոխությունները (պասիվ նմուշառում)։





Հանրապետության տարբեր բնակավայրեր

2017թ. 2-րդ եռամսյակում պասիվ նմուշառիչներով օդային ավազանի որակի դիտարկումներ կատարվել են հանրապետության Կապան, Քաջարան, Չարենցավան, Մարտունի քաղաքներում և Սյունիք գյուղական համայնքում:

Կապան քաղաքի 11 դիտակետում տեղադրված պասիվ նմուշառիչներով երեք ամիսների ընթացքում վերցվել է օդի 155 փորձանմուշ, Քաջարան քաղաքի 15 դիտակետից՝ 190 փորձանմուշ, Չարենցավան քաղաքի 10 դիտակետից՝ 260 փորձանմուշ, Մարտունի քաղաքի 8 դիտակետից՝ 144 փորձանմուշ, Սյունիք գյուղական համայնքի 9 դիտակետից՝ 136 փորձանմուշ:

Նշված բնակավայրերի մթնոլորտային օդում ծծմբի և ազոտի երկօքսիդների միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

Ծծմբի և ազոտի երկօքսիդների միջին ամսական (2-րդ եռամսյակ) կոնցենտրացիաների գրաֆիկական պատկերները



ՄԱԿԵՐՆՎՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐ

2017թ. 2-րդ եռամսյակում կատարվել են մակերևութային և ստորերկրյա քաղցրահամ ջրերի դիտարկումներ:

Մակերևութային ջրերի որակի դիտարկումներ իրականացվել են հանրապետության 43 գետի, Երևանյան և Սևանա լճերի, Ապարանի, Ախուրյանի, Արփի լճի, Ագատի, Կեչուտի ջրամբարների 131 դիտակետում, որտեղից վերցվել է 338 փորձանմուշ: Վերցված փորձանմուշներում որոշվել է միջինը 45 ջրի որակի ցուցանիշ: Իրականացված դիտարկումների արդյունքները բերված են հավելվածներում աղյուսակների տեսքով:

Ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական և որակական դիտարկումներ իրականացվել են հանրապետության ազգային կամ հենակետային ցանցում ընդգրկված 128 ստորերկրյա ջրադրյուրներում*, որոնք ներառում են 27 շատրվանոդ հորատանցք, 37 չշատրվանոդ հորատանցք և 64 բնադրյուր: Ջրադրյուրներում ջրի ծախսի, մակարդակի (ճնշման) և ջերմաստիճանի դիտակումները կատարվում են ամիսը 6 անգամ հաճախականությամբ: Ջրերի որակի դիտարկումներն իրականացվում են 50 ստորերկրյա ջրադրյուրում: Իրականացված դիտարկումների արդյունքները նշվում են աղյուսակների և գրաֆիկների տեսքով:

Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր

Փամբակ գետի ողջ հոսանքում ապրիլին ջուրը գնահատվել է «միջակ» որակի (3-րդ դաս): Հարթագյուղից վերև հատվածում մայիս, հունիս ամիսներին ջուրը գնահատվել է «միջակ» որակի (3-րդ դաս): Սպիտակից ներքև հատվածում մայիսին ջուրը գնահատվել է «լավ» որակի (2-րդ դաս), հունիսին՝ «միջակ» որակի (3-րդ դաս): Մայիս, հունիս ամիսներին Հարթագյուղից վերև հատվածում ջուրը գնահատվել է «միջակ» որակի (3-րդ դաս), Վանաձորից վերև հատվածում՝ «լավ» որակի (2-րդ դաս), Վանաձորից ներքև հատվածում՝ «անբավարար» որակի (4-րդ դաս):

Դեբեդ գետի Մարցիգետի թափման կետից ներքև ընկած հատվածում ապրիլ, մայիս ամիսներին ջուրը գնահատվել է «միջակ» որակի (3-րդ դաս), հունիսին՝ «անբավարար» որակի (4-րդ դաս): Այրումից վերև և սահմանի մոտ հատվածներում ապրիլ, մայիս ամիսներին ջուրը գնահատվել է «անբավարար» որակի (4-րդ դաս), հունիս ամսին՝ «վատ» որակի (5-րդ դաս):

Չորագետի Ստեփանավանից վերև հատվածում ապրիլին և հունիսին ջուրը գնահատվել է «լավ» որակի (2-րդ դաս), մայիսին՝ «միջակ» որակի (3-րդ դաս):

Տաշիր գետի Միխայելովկայից վերև հատվածում ապրիլին ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս), մայիսին և հունիսին՝ «միջակ» որակի (3-րդ դաս), Սարատովկայից ներքև հատվածում՝ երեք ամիսների ընթացքում ջուրը գնահատվել է «միջակ» որակի (3-րդ դաս):

Մարցիգետի գետաբերանի հատվածում երեք ամիսների ընթացքում ջուրը գնահատվել է «լավ» որակի (2-րդ դաս):

* Ստորերկրյա ջրերի դիտակետերի տեսակը, համարները, տեղադիրքը տրված է տեղեկանքի 90-րդ էջում աղյուսակի տեսքով

Ախթալա գետի գետաբերանի հատվածում երեք ամիսների ընթացքում ջուրը գնահատվել է «վատ» որակի (5-րդ դաս):

Գառգառ գետի ակունքում երեք ամիսների ընթացքում ջուրը գնահատվել է «լավ» որակի (2-րդ դաս): Գետաբերանի հատվածում ապրիլ և մայիս ամիսներին ջուրը «միջակ» որակի է (3-րդ դաս), հունիսին՝ «լավ» որակի (2-րդ դաս):


Շնող գետի գետաբերանում երեք ամիսների ընթացքում ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս):

Աղստև գետի ողջ հոսանքում ապրիլ ամսին ջուրը գնահատվել է «միջակ» որակի (3-րդ դաս): Մայիս և հունիս ամիսներին Դիլիջանից վերև հատվածում ջուրը գնահատվել է «միջակ» որակի (3-րդ դաս): Դիլիջանից ներքև հատվածում մայիսին ջուրը գնահատվել է «անբավարար» որակի (4-րդ դաս), հունիսին՝ «միջակ» որակի (3-րդ դաս): Իջևանից վերև և սահմանի մոտ հատվածներում մայիսին ջուրը գնահատվել է «միջակ» որակի (3-րդ դաս), հունիսին՝ «լավ» որակի (2-րդ դաս):


Գետիկ գետի ճամբարակից վերև հատվածում ապրիլ և հունիս ամիսներին ջուրը գնահատվել է «միջակ» որակի (3-րդ դաս), մայիսին՝ «վատ» որակի (5-րդ դաս): Գետաբերանի հատվածում ապրիլ, մայիս ամիսներին ջուրը գնահատվել է «միջակ» որակի, հունիսին՝ «անբավարար» որակի (4-րդ դաս): Մակերևութային ջրերի որակը աղյուսակների տեսքով բերված է հավելված 1-ում:

Ստորերկրյա ջրեր

Հյուսիսային ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 5 բնադրյուրում, որտեղ դիտարկվում են ջրի ջերմաստիճանը և ծախսը: Որակական դիտարկումներ կատարվել են 2 բնադրյուրում: Ծախսի չափումները երեք ամիսների համար ըստ դիտակետերի ներկայացված է գրաֆիկի տեսքով.



**ԴԵԲԵԴ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ
ՋՐԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ՈՐԱԿԸ ԵՎ
ՄՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԴԻՏԱԿԵՏԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ**



- ՊԱՅՄԱՆԱՆՇԱՆՆԵՐ**
- Մարզկենտրոն
 - Քաղաքներ
 - Գյուղեր
 - ▲ Ջրի նմուշառման դիտակետեր
 - ▲ Ստորերկրյա ջրերի նմուշառման դիտակետեր
 - Գետային ցանց
 - 22 պետական սահման
 - Լճեր և ջրամբարներ
 - Դերեղ գետի պլագան



- Մակերևութային ջրերի որակի դասեր**
- 2-րդ դաս
 - 3-րդ դաս
 - 4-րդ դաս
 - 5-րդ դաս

**ԱՂՍՏԵՎ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ
ՋՐԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ՈՐԱԿԸ ԵՎ
ՄՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԴԻՏԱԿԵՏԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ**



ՊԱՅՄԱՆԱՆՇԱՆՆԵՐ

- Մարզկենտրոն
- Քաղաքներ
- Գյուղեր
- ▶ Ստորեկրկրյա ջրերի ենուշաման դիտակետեր
- Գետային ցանց
- ՀՀ պետական սահման
- Աղստև գետի ավազան

Մախերնության ջրերի որակի դասեր

- 2-րդ դաս
- 3-րդ դաս
- 4-րդ դաս
- 5-րդ դաս



Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր

Ախուրյան գետի Ամասիայից վերև հատվածում մայիս, հունիս ամիսներին ջուրը գնահատվել է «միջակ» որակի (3-րդ դաս): Ամասայից ներքև հատվածում ապրիլին ջուրը գնահատվել է «վատ» որակի (5-րդ դաս), մայիսին՝ «անբավարար» որակի (4-րդ դաս), հունիսին՝ «միջակ» որակի (3-րդ դաս): Գյումրիից վերև հատվածում ապրիլին ջուրը գնահատվել է «միջակ» որակի (3-րդ դաս), մայիսին՝ «վատ» որակի (5-րդ դաս), հունիսին՝ «անբավարար» որակի (4-րդ դաս): Գյումրիից ներքև հատվածում ապրիլին ջուրը գնահատվել է «միջակ» որակի (3-րդ դաս), մայիս, հունիս ամիսներին՝ «անբավարար» որակի (4-րդ դաս): Երվանդաշատից ներքև ընկած հատվածում ապրիլին և հունիսին ջուրը գնահատվել է «միջակ» որակի (3-րդ դաս), մայիսին՝ «վատ» որակի (4-րդ դաս):


Ապրիլ, մայիս, հունիս ամիսների ընթացքում Աշոցք գետի Արտաշենից վերև հատվածում ջուրը գնահատվել է «լավ» որակի (2-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «միջակ» որակի (3-րդ դաս):




Կարկաչուն գետի գետաբերանում երեք ամիսների ընթացքում ջուրը գնահատվել է «վատ» որակի (5-րդ դաս):


Մեծամոր գետի ողջ հոսանքում ապրիլին ջուրը գնահատվել է «անբավարար» որակի (4-րդ դաս): Վաղարշապատից հարավ ընկած հատվածում մայիս, հունիս ամիսներին ջուրը գնահատվել է «անբավարար» որակի (4-րդ դաս): Վաղարշապատից հարավ-արևելք ընկած հատվածում մայիսին ջուրը գնահատվել է «անբավարար» որակի (4-րդ դաս), հունիսին՝ «վատ» որակի (5-րդ դաս): Ռանչպարից ներքև ընկած հատվածում մայիսին ջուրը գնահատվել է «միջակ» որակի (3-րդ դաս), հունիսին՝ «անբավարար» որակի (4-րդ դաս):

Ստորերկրյա ջրեր


Ախուրյանի ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 14 բնադրյուրում, 7 շատրվանող և 15 չշատրվանող հորատանցքերում, որտեղ դիտարկվում են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը: Ծախսի և մակարդակի չափումները երեք ամիսների համար ըստ դիտակետերի ներկայացված են գրաֆիկների տեսքով:







Ախուրյանի ՋԿՏ-ի դիտակետերում որակական դիտարկումներ կատարվել են 6 բնադրյալում, 4 շատրվանող և 7 չշատրվանող հորատանցքերում: Որոշված ցուցանիշներից ընդհանուր լուծված աղերի գրաֆիկական պատկերը ներկայացվում է ստորև.



**ԱՆՈՒՐՅԱՆ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ
ՋՐԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ՈՐԱԿԸ ԵՎ
ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԴԻՏԱԿԵՏԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ**




- ՊԱՅՄԱՆԱՆՇԱՆՆԵՐ**
- Մարզկենտրոն
 - Քաղաքներ
 - Գյուղեր
 - Ջրմբ. նմուշառման դիտակետեր
 - Ջրի նմուշառման դիտակետեր
 - Ստորերկրյա ջրերի նմուշառման դիտակետեր
 - Գետային ցանց
 - ՀՀ պետական սահման
 - Լճեր և ջրամբարներ
 - Ախուրյան գետի ավազան


- Մակերևութային ջրերի որակի դասեր**
- 2-րդ դաս
 - 3-րդ դաս
 - 4-րդ դաս
 - 5-րդ դաս



**ՄԵԾԱՄՈՐ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ
ՋՐԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ՈՐԱԿԸ ԵՎ
ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԴԻՏԱԿԵՏԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ**



- ՊԱՅՄԱՆԱՆՇԱՆՆԵՐ**
- Մարզկենտրոն
 - Քաղաքներ
 - Գյուղեր
 - Ստորերկրյա ջրերի ննուշառման դիտակետեր
 - Գետային ցանց
 - ՀՀ պետական սահման
 - Լճեր և ջրամբարներ
 - Մեծամոր գետի ավազան



- Մակերևութային ջրերի որակի դասեր**
- 3-րդ դաս
 - 4-րդ դաս
 - 5-րդ դաս

Հրագրանի ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր

Քասախ գետի Ապարանից վերև հատվածում երեք ամիսների ընթացքում ջուրը գնահատվել է «միջակ» որակի (3-րդ դաս), Ապարանից ներքև հատվածում ապրիլին ջուրը գնահատվել է «վատ» որակի (5-րդ դաս), հունիսին՝ «անբավարար» որակի (4-րդ դաս): Աշտարակից վերև և ներքև ընկած հատվածներում երեք ամիսների ընթացքում ջուրը գնահատվել է «միջակ» որակի (3-րդ դաս): Գետաբերանի հատվածում ապրիլին ջուրը գնահատվել է «միջակ» որակի (3-րդ դաս), մայիս, հունիս ամիսներին՝ «անբավարար» որակի (4-րդ դաս):

Մայիս, հունիս ամիսներին Գեղարոտ գետի Արագածից վերև հատվածում ջուրը գնահատվել է «վատ» որակի (5-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «միջակ» որակի (3-րդ դաս):

Շաղվարդ գետի Փարայից ներքև հատվածում երեք ամիսների ընթացքում ջուրը գնահատվել է «միջակ» որակի (3-րդ դաս):

Հրագրան գետի Քաղսից ներքև ընկած հատվածում ապրիլ, հունիս ամիսներին ջուրը գնահատվել է «անբավարար» որակի (4-րդ դաս):





Արգելից ներքև հատվածում ապրիլ, մայիս ամիսներին ջուրը գնահատվել է «միջակ» որակի (3-րդ դաս), հունիսին՝ «անբավարար» որակի (4-րդ դաս): Դարբնիկ գյուղի մոտ հատվածում երեք ամիսների ընթացքում ջուրը գնահատվել է «վատ» որակի (5-րդ դաս): Գետաբերանի և Դարբնիկ գյուղի մոտ հատվածներում ապրիլին ջուրը գնահատվել է «անբավարար» որակի (4-րդ դաս), մայիս, հունիս ամիսներին՝ «վատ» որակի (5-րդ դաս):



Գետառ գետի գետաբերանի հատվածում երեք ամիսների ընթացքում ջուրը գնահատվել է «վատ» որակի (5-րդ դաս):

Մարմարիկ գետի Հանքավայրից վերև հատվածում մայիս, հունիս ամիսներին ջուրը գնահատվել է «լավ» որակի (2-րդ դաս): Գետաբերանի հատվածում երեք ամիսների ընթացքում ջուրը գնահատվել է «միջակ» որակի (3-րդ դաս):


Ստորերկրյա ջրեր

Հրագրանի ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 15 բնադրյություն, 9 շատրվանոց և 8 չշատրվանոց հորատանցքում, որտեղ դիտարկվում են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը: Ծախսի և մակարդակի չափումները երեք ամիսների համար ըստ դիտակետերի ներկայացված են գրաֆիկների տեսքով:





Հրազդանի ՋԿՏ-ի 3 բնաղբյուրի, 3 շատրվանող և 3 չջատրվանող հորատանցքերի դիտակետերում կատարվել են ջրի որակի դիտարկումներ, որոշված ցուցանիշներից ընդհանուր լուծված աղերի գրաֆիկական պատկերը ներկայացվում է ստորև



**ՔԱՍԱԽ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ
ՋՐԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ՈՐԱԿԸ ԵՎ
ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԴԻՏԱԿԵՏԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ**




- ՊԱՅՄԱՆԱՆՇԱՆՆԵՐ**
- Մարզկենտրոն
 - Քաղաքներ
 - Գյուղեր
 - Ջրմբ. նմուշառման դիտակետեր
 - Ջրի նմուշառման դիտակետեր
 - Ստորերկրյա ջրերի նմուշառման դիտակետեր
 - Գետային ցանց
 - ՀՀ պետական սահման
 - ԼՃեր և ջրամբարներ
 - Քասախ գետի ավազան




- Մակերևութային ջրերի որակի դասեր**
- 2-րդ դաս
 - 3-րդ դաս
 - 4-րդ դաս
 - 5-րդ դաս

**ՀՐԱՋԴԱՆ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ
ՋՐԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ՈՐԱԿԸ ԵՎ
ՍՏՈՐԵՐԿՐԻԱ ՋՐԵՐԻ ԴԻՏԱԿԵՏԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ**



- ՊԱՅՄԱՆԱՆՇԱՆՆԵՐ**
- Մարզկենտրոն
 - Քաղաքներ
 - Գյուղեր
 - Ջրմբ. նմուշառման դիտակետեր
 - Ջրի նմուշառման դիտակետեր
 - Ստորերկրյա ջրերի նմուշառման դիտակետեր
 - Գետային ցանց
 - ՀՀ պետական սահման
 - Լճեր և ջրամբարներ
 - ԵՐԵՎԱՆ
 - Հրազդան գետի ավազան



- Մակերևութային ջրերի որակի դասեր**
- 2-րդ դաս
 - 3-րդ դաս
 - 4-րդ դաս
 - 5-րդ դաս

Մեանի ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր

Ձկնագետ գետի Մեմյոնովկայից վերև հատվածում ապրիլին ջուրը գնահատվել է «միջակ» որակի (3-րդ դաս), հունիսին՝ «լավ» որակի (2-րդ դաս): Գետաբերանի հատվածում ապրիլ և հունիս ամիսներին ջուրը գնահատվել է «միջակ» որակի (3-րդ դաս):

Ապրիլ և հունիս ամիսներին Մասրիկ գետի Վերին Շորժայից վերև հատվածում ջուրը գնահատվել է «միջակ» որակի (3-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «անբավարար» որակի (4-րդ դաս):

Ապրիլ և հունիս ամիսներին Սոթք գետի հանքավայրից վերև հատվածում ջուրը գնահատվել է «լավ» որակի (2-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «միջակ» որակի (3-րդ դաս):

Կարճաղբյուր գետի Աղբյուրաձորից վերև հատվածում ապրիլ և հունիս ամիսներին ջուրը գնահատվել է «լավ» որակի (2-րդ դաս): Գետաբերանի հատվածում ապրիլին ջուրը գնահատվել է «միջակ» որակի (3-րդ դաս), հունիսին՝ «լավ» որակի (2-րդ դաս):

Վարդենիս գետի Վարդենիկից վերև և գետաբերանի հատվածներում ապրիլին ջուրը գնահատվել է «միջակ» որակի (3-րդ դաս), հունիսին՝ «լավ» որակի (2-րդ դաս):

Մարտունի գետի Գեղահովիտից վերև և գետաբերանի հատվածներում ապրիլ և հունիս ամիսներին ջուրը գնահատվել է «միջակ» որակի (3-րդ դաս):

Արգիճի գետի Լեռնակերտից վերև և գետաբերանի հատվածներում ապրիլ և հունիս ամիսներին ջուրը գնահատվել է «միջակ» որակի (3-րդ դաս):





Ծակքար գետի գետաբերանի հատվածում ապրիլ ամսին ջուրը գնահատվել է «լավ» որակի (2-րդ դաս), հունիսին՝ «միջակ» որակի (3-րդ դաս):

Շողվազ գետի գետաբերանի հատվածում ապրիլ և հունիս ամիսներին ջուրը գնահատվել է «միջակ» որակի (3-րդ դաս):


Գավառագետ գետի Ծաղկավանից վերև հատվածներում ապրիլ և հունիս ամիսներին ջուրը գնահատվել է «միջակ» որակի (3-րդ դաս): Գետաբերանի հատվածում ապրիլին ջուրը գնահատվել է «միջակ» որակի (3-րդ դաս), հունիսին՝ «անբավարար» որակի (4-րդ դաս):

Ստորերկրյա ջրեր

Մեանի ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 9 բնաղբյուրում, 6 շատրվանող և 1 չշատրվանող հորատանցքերում, որտեղ դիտարկվում են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը: Որակական դիտարկումներ կատարվել են 3 բնաղբյուրի, 4 շատրվանող և 1 չշատրվանող հորատանցքերի դիտակետերում: Ծախսի և մակարդակի չափումները երեք ամիսների համար ըստ դիտակետերի ներկայացված են գրաֆիկների տեսքով:



**ՄԵՎԱՆԻ ԶՐԱՎԱԶԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ
ԳԵՏԵՐԻ ԶՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ՈՐԱԿԸ ԵՎ
ՄՏՈՐԵՐԿՐՅԱ ԶՐԵՐԻ ԴԻՏԱԿԵՏԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ**



- ՊԱՅՄԱՆԱՆՇԱՆՆԵՐ**
- Մարզկենտրոն
 - Քաղաքներ
 - Գյուղեր
 - Սևանա լճի նմուշառման դիտակետեր
 - Զրի նմուշառման դիտակետեր
 - Գետային ցանց
 - ՀՀ պետական սահման
 - Լճեր և ջրամբարներ
 - Սևանի ջրավազանային կառավարման տարածք

- Մակերևութային ջրերի որակի դասեր**
- 2-րդ դաս
 - 3-րդ դաս
 - 4-րդ դաս



Արարատյան ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր

Վեդի գետի Ուրցաձորից վերև և Արարատից ներքև հատվածներում ապրիլ, մայիս ամիսներին ջուրը գնահատվել է «միջակ» որակի (3-րդ դաս): Հունիսին Ուրցաձորից վերև ջուրը գնահատվել է «լավ» որակի (2-րդ դաս):



Արփա գետի ողջ հոսանքում երեք ամիսների ընթացքում ջուրը գնահատվել է «միջակ» որակի (3-րդ դաս):




Եղեգիս գետի Շատին գյուղից ներքև հատվածում երեք ամիսների ընթացքում ջուրը գնահատվել է «միջակ» որակի (3-րդ դաս):

Արփա-Սևան թունելի Ծովինարից վերև հատվածում ապրիլ ամսին ջուրը գնահատվել է «միջակ» որակի (3-րդ դաս), հունիսին՝ «լավ» որակի (2-րդ դաս):


Ստորերկրյա ջրեր

Արարատյան ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 12 բնադրյուրում, 5 շատրվանող և 13 չշատրվանող հորատանցքերում, որտեղ դիտարկվում են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը: Ծախսի և մակարդակի չափումները երեք ամիսների համար ըստ դիտակետերի ներկայացված են գրաֆիկների տեսքով:






Արարատյան ՋԿՏ-ի 4 բնադրյուրի և 1 շատրվանող և 5 չշատրվանող հորատանցքերիի դիտակետերում կատարվել են ջրի որակի դիտարկումներ, որոշված ցուցանիշներից ընդհանուր լուծված աղերի գրաֆիկական պատկերը ներկայացվում է ստորև.



**ԱԶԱՏ ԵՎ ՎԵՂԻ ԳԵՏԵՐԻ ԱՎԱԶԱՆՆԵՐԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ
ՋՐԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ՈՐԱԿՐ ԵՎ
ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԴԻՏԱԿԵՏԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ**




- ՊԱՅՄԱՆԱՆՇԱՆՆԵՐ**
- Մարզկենտրոն
 - Քաղաքներ
 - Գյուղեր
 - Ջրմբ. նմուշառման դիտակետեր
 - ▲ Ջրի նմուշառման դիտակետեր
 - Ստորերկրյա ջրերի նմուշառման դիտակետեր
 - Գետային ցանց
 - ՀՀ պետական սահման
 - Լճեր և ջրամբարներ
 - Վեղի գետի ավազան
 - Ազատ գետի ավազան



- Մակերևութային ջրերի որակի դասեր**
- 2-րդ դաս
 - 3-րդ դաս
 - 4-րդ դաս

**ԱՐՓԱ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ
ՋՐԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ՈՐԱԿԸ ԵՎ
ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԴԻՏԱԿԵՏԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ**



ՊԱՅՄԱՆԱՇԱՆՆԵՐ

- Մարզկենտրոն
- Քաղաքներ
- Գյուղեր
- Ջրի նմուշառման դիտակետեր
- ▲ Ջրմբ. նմուշառման դիտակետեր
- Ստորերկրյա ջրերի նմուշառման դիտակետեր
- Գետային ցանց
- 22 կետական սահման
- Արփա գետի ավազան
- Արփա գետի ավազան



Մակերևութային ջրերի որակի դասեր

- 2-րդ դաս
- 3-րդ դաս

Հարավային ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր

Մեղրի գետի Մեղրիից վերև և գետաբերանի հատվածներում երեք ամիսների ընթացքում ջուրը գնահատվել է «միջակ» որակի (3-րդ դաս):

Կարճևան գետի գետաբերանի հատվածում երեք ամիսների ընթացքում ջուրը գնահատվել է «վատ» որակի (5-րդ դաս):

Ողջի գետի Քաջարանից վերև հատվածում երեք ամիսների ընթացքում ջուրը գնահատվել է «լավ» որակի (2-րդ դաս), Քաջարանից ներքև հատվածում ապրիլին ջուրը գնահատվել է «վատ» որակի (5-րդ դաս), մայիսին՝ «անբավարար» որակի (4-րդ դաս), հունիսին՝ «լավ» որակի (2-րդ դաս):

Կապանից վերև հատվածում մայիսին ջուրը գնահատվել է «միջակ» որակի (3-րդ դաս), հունիսին՝ «լավ» որակի (2-րդ դաս): Կապանից ներքև հատվածում ջուրը մայիս, հունիս ամիսներին գնահատվել է «վատ» որակի (5-րդ դաս):

Արծվանիկ գետի պոչամբարից վերև հատվածում մայիս և հունիս ամիսներին ջուրը գնահատվել է «միջակ» որակի (3-րդ դաս), գետաբերանի հատվածում երեք ամիսների ընթացքում ջուրը գնահատվել է «վատ» որակի (5-րդ դաս):

Գեղի գետի Աջիքաջից վերև հատվածում մայիսին ջուրը գնահատվել է «միջակ» որակի (3-րդ դաս), հունիսին՝ «լավ» որակի (2-րդ դաս): Գեղի գետի գետաբերանի հատվածում ապրիլ և հունիս ամիսներին ջուրը գնահատվել է «լավ» որակի (2-րդ դաս), մայիսին՝ «միջակ» որակի (3-րդ դաս):


Որոտան գետի Գորայքից վերև հատվածում ապրիլ ամսին ջուրը գնահատվել է «լավ» որակի (2-րդ դաս), մայիսին՝ «անբավարար» որակի (4-րդ դաս), հունիսին՝ «միջակ» որակի (3-րդ դաս): Սիսիանից վերև և ներքև հատվածներում երեք ամիսների ընթացքում ջուրը գնահատվել է «միջակ» որակի (3-րդ դաս): Տաթև ՀԷԿ-ից ներքև հատվածում ապրիլին ջուրը գնահատվել է «լավ» որակի (2-րդ դաս), մայիս և հունիս ամիսներին՝ «միջակ» որակի (3-րդ դաս):

Սիսիան գետի Արևիսից վերև հատվածում մայիս, հունիս ամիսներին ջուրը գնահատվել է «միջակ» որակի (3-րդ դաս), գետաբերանի հատվածում ապրիլ և հունիս ամիսներին ջուրը գնահատվել է «միջակ» որակի (3-րդ դաս), մայիսին՝ «անբավարար» որակի (4-րդ դաս):


Գորիսգետի Գորիսից վերև հատվածում ապրիլ և հունիս ամիսներին ջուրը գնահատվել է «լավ» որակի (2-րդ դաս), մայիսին՝ «միջակ» որակի (3-րդ դաս): Գորիսից ներքև հատվածում ապրիլին ջուրը գնահատվել է «անբավարար» որակի (4-րդ դաս), մայիս և հունիս ամիսներին՝ «վատ» որակի (5-րդ դաս):

Ստորերկրյա ջրեր



Հարավային ՋԿՏ-ի ստորերկրյա ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 9 բնադրյուրում, որտեղ դիտարկվում են ջրի ջերմաստիճանը և ծախսը: Ծախսի չափումները երեք ամիսների համար ըստ դիտակետերի ներկայացված են գրաֆիկների տեսքով:



Հարավային ՋԿՏ-ի 4 բնադրյուրի դիտակետերում կատարվել են ջրի որակի դիտարկումներ, որոշված ցուցանիշներից ընդհանուր լուծված աղերի գրաֆիկական պատկերը ներկայացվում է ստորև




**ՄԵՂՐԻ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ
ՋՐԵՐԻ ՔԻՄԱԿԱՆ ՈՐԱԿԸ**





- ՊԱՅՄԱՆԱՆՇԱՆՆԵՐ**
- Մարզկենտրոն
 - Քաղաքներ
 - Գյուղեր
 - Գետային ցանց
 - ՀՀ պետական սահման
 - Մեղրի գետի ավազան

- Մակերևութային ջրերի որակի դասեր**
- 3-րդ դաս
 - 5-րդ դաս



**ՈՂՋԻ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ
ՋՐԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ՈՐԱԿԸ**




- ՊԱՅՄԱՆԱՆՇԱՆՆԵՐ**
- Մարզկենտրոն
 - Քաղաքներ
 - Գյուղեր
 - ▲ Ջրի նմուշառման դիտակետեր
 - Գետային ցանց
 - ՀՀ պետական սահման
 - Լճեր և ջրամբարներ
 - Ողջի գետի ավազան



- Մակերևութային ջրերի որակի դասեր**
- 2-րդ դաս
 - 3-րդ դաս
 - 4-րդ դաս
 - 5-րդ դաս

Արաքս գետ

2017թ. 2-րդ եռամսյակում ջրի և հատակային նստվածքի փորձանմուշներ են վերցվել Արաքս գետի 8 դիտակետից: Վերցված ջրի փորձանմուշներում որոշված ցուցանիշներից, ըստ ձկնատնտեսական ՄԹԿ-ով գնահատման, դիտվում է վանադիումով և որոշ փորձանմուշներում ալյումինով բարձր աղտոտվածություն: Որոշված մյուս ցուցանիշներից գերազանցվել են ԹԿՊ₅-ի, ԹՔՊ-ի, ամոնիում, նիտրիտ և սուլֆատ իոնների, պղնձի, ցինկի, քրոմի, մանգանի, երկաթի, նիկելի, մագնեզիումի և սելենի ՄԹԿ-ները: Արաքս գետի աղտոտվածության գերազանցումների վերաբերյալ մանրամասն տեղեկություն ըստ առանձին ամիսների տրվում է հավելված 3-ում:



Սևանա լիճ

2017թ. մայիսին Սևանա լճի ջրի որակի ուսումնասիրությունների համար վերցվել են նմուշներ լճի մակերևույթից և տարբեր խորությամբ կտրվածքներից (16 դիտակետից 48 փորձանմուշ): Համաձայն ստացված տվյալների Սևանա լճի թթվածնային ռեժիմը եղել է բավարար լճի բնական կենսագործունեության համար՝ դիտվելով թույլատրելի նորմի սահմանում:

Սևանա լճից վերցված փորձանմուշներում, ըստ ձկնատնտեսական նորմերի գնահատման, ՍԹԿ-ն գերազանցել են ԹԿՊ₅-ի, ԹՔՊ-ի, պղնձի, քրոմի, վանադիումի, մագնեզիումի և սելենի կոնցենտրացիաները: ԹԿՊ₅-ի սահմանային թույլատրելի կոնցենտրացիան գերազանցվել է 1.2-1.4 անգամ, ԹՔՊ-ինը՝ 1.2-2.0 անգամ, պղնձինը՝ 1.3-7.3 անգամ, քրոմինը՝ 2.0-3.8 անգամ, վանադիումինը՝ 5.0-5.9 անգամ, մագնեզիումինը՝ 1.2 անգամ, , սելենինը՝ 5.7-7.0 անգամ:

Որոշված մյուս ցուցանիշների պարունակությունները դիտվել են սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների սահմաններում:



Մևանա լճի ջրի որակի մոնիթորինգի արդյունքները 2017թ. մայիսին

Դիտակետի համար	Դիտակետի տեղադրություն	Կոնցենտրացիաների գերազանցումը ՍԹԿ-ից (անգամ)						
		ԹԿՊ ₅ , ՍԹԿ=3 մգ/լ	ԹՔՊ, ՍԹԿ=30 մգ/լ	Պղինձ, ՍԹԿ=0,001 մգ/լ	Քրոմ, ՍԹԿ=0,001 մգ/լ	Վանադիում, ՍԹԿ=0,001 մգ/լ	Մագնեզիում, ՍԹԿ=40 մգ/լ	Սելեն, ՍԹԿ=0,001 մգ/լ
115	3.5 կմ թերակղզուց դեպի արևելք, մակերևույթից	-	-	-	2.7	5.4	-	6.6
	3.5 կմ թերակղզուց դեպի արևելք, 7մ խորությունից	1.3	-	-	2.9	5.2	-	6.5
	3.5 կմ թերակղզուց դեպի արևելք, 30մ խորությունից	1.3	-	-	2.5	5.2	-	6.3
116	70° ազիմուտով թերակղզուց, մակերևույթից	1.3	-	-	2.4	5.4	-	6.4
	70° ազիմուտով թերակղզուց, 7մ խորությունից	-	-	-	2.5	5.3	-	6.4
	70° ազիմուտով թերակղզուց, 30մ խորությունից	1.2	-	-	2.8	5.1	-	6.4
117	Ձկնագետ գետի գետաբերանից 1 կմ հեռավորությամբ, մակերևույթից	1.3	1.3	-	2.8	5.3	1.2	6.5
	Ձկնագետ գետի գետաբերանից 1 կմ հեռավորությամբ, 7մ խորությունից	1.3	-	-	2.6	5.3	-	6.6
118	0.5 կմ Շորժա գյուղից դեպի հարավ-արևմուտք, մակերևույթից	1.3	-	-	2.4	5.2	-	6.2
	0.5 կմ Շորժա գյուղից դեպի հարավ-արևմուտք, 7մ խորությունից	-	-	-	2.2	5.1	-	6.2
119	6.6 կմ 225° ազիմուտով Շորժա գյուղից դեպի հարավ, հարավ-արևմուտք, մակերևույթից	-	-	-	2.0	5.0	-	6.1
	6.6 կմ 225° ազիմուտով Շորժա գյուղից դեպի հարավ, հարավ-արևմուտք, 7մ խորությունից	-	-	-	2.0	5.2	-	6.3

Դիտակետի համար	Դիտակետի տեղադրություն	Կոնցենտրացիաների գերազանցումը ՍԹԿ-ից (անգամ)						
		ԹԿՊ, ՍԹԿ=3 սգ/լ	ԹՔՊ, ՍԹԿ=30 սգ/լ	Պղինձ, ՍԹԿ=0,001 սգ/լ	Քրոմ, ՍԹԿ=0,001 սգ/լ	Վանադիում, ՍԹԿ=0,001 սգ/լ	Մագնեզիում, ՍԹԿ=40 սգ/լ	Սելեն, ՍԹԿ=0,001 սգ/լ
119	6.6 կմ 225° ազիմուտով Շորժա գյուղից դեպի հարավ, հարավ-արևմուտք, 20մ խորությունից	1.2	-	-	2.2	5.2	-	6.2
	6.6 կմ 225° ազիմուտով Շորժա գյուղից դեպի հարավ, հարավ-արևմուտք, 40մ խորությունից	-	-	-	2.9	5.1	-	6.3
120	2 կմ Արտանիշ գյուղից 135° ազիմուտով, մակերևույթից	-	-	-	3.4	5.5	1.2	6.3
	2 կմ Արտանիշ գյուղից 135° ազիմուտով, 7մ խորությունից	1.3	-	-	3.3	5.6	1.2	6.3
	2 կմ Արտանիշ գյուղից 135° ազիմուտով, 30մ խորությունից	-	1.3	-	3.1	5.5	1.2	6.2
121	10կմ Փամբակ գյուղից 270° ազիմուտով, մակերևույթից	-	-	-	3.3	5.7	1.2	6.8
	10կմ Փամբակ գյուղից 270° ազիմուտով, 7մ խորությունից	-	-	-	3.1	5.7	1.2	6.7
	10կմ Փամբակ գյուղից 270° ազիմուտով, 30մ խորությունից	-	-	-	3.3	5.7	1.2	6.9
122	2.2կմ Փամբակ գյուղից 255° ազիմուտով, մակերևույթից	-	1.3	-	3.6	5.6	1.2	6.3
	2.2կմ Փամբակ գյուղից 255° ազիմուտով, 7մ խորությունից	1.2	-	-	3.8	5.6	1.2	6.4
	2.2կմ Փամբակ գյուղից 255° ազիմուտով, 20մ խորությունից	-	1.3	1.9	3.6	5.8	1.2	6.3
123	13կմ Փամբակ գյուղից 235° ազիմուտով, մակերևույթից	1.2	1.3	-	3.2	5.6	1.2	6.2
	13կմ Փամբակ գյուղից 235° ազիմուտով, 7մ խորությունից	1.3	1.3	-	3.2	5.7	1.2	6.3
	13կմ Փամբակ գյուղից 235° ազիմուտով, 25մ խորությունից	-	1.3	-	3.0	5.7	1.2	6.3
124	1կմ Ծովակ գյուղից դեպի հյուսիս-արևմուտք, մակերևույթից	-	-	7.3	3.7	5.7	-	6.2
	1կմ Ծովակ գյուղից դեպի հյուսիս-արևմուտք, 7մ խորությունից	-	1.2	-	3.4	5.5	1.2	6.1

Դիտակետի համար	Դիտակետի տեղադրություն	Կոնցենտրացիաների գերազանցումը ՍԹԿ-ից (անգամ)						
		ԹԿՊ ₅ , ՍԹԿ=3 սզ/լ	ԹՖՊ, ՍԹԿ=30 սզ/լ	Պղինձ, ՍԹԿ=0,001 սզ/լ	Քրոմ, ՍԹԿ=0,001 սզ/լ	Վանադիում, ՍԹԿ=0,001 սզ/լ	Մագնեզիում, ՍԹԿ=40 սզ/լ	Սելեն, ՍԹԿ=0,001 սզ/լ
125	1 կմ Կարճաղբյուրի գետի գետաբերանից դեպի արևմուտք, մակերևույթից	-	1.3	-	3.4	5.5	1.2	6.8
	1 կմ Կարճաղբյուրի գետի գետաբերանից դեպի արևմուտք, 7մ խորությունից	-	1.3	-	3.1	5.6	1.2	6.7
	1 կմ Կարճաղբյուրի գետի գետաբերանից դեպի արևմուտք, 30մ խորությունից	-	-	-	3.0	5.6	1.2	6.6
126	1 կմ Արծվանիստ գյուղից դեպի հյուսիս, մակերևույթից	-	1.3	1.3	3.3	5.2	-	5.7
	1 կմ Արծվանիստ գյուղից դեպի հյուսիս, 7մ խորությունից	-	1.3	-	2.5	5.0	-	5.9
127	1.5 կմ Մարտունի քաղաքից դեպի հյուսիս, մակերևույթից	-	2.0	-	2.8	5.4	-	5.9
	1.5 կմ Մարտունի քաղաքից դեպի հյուսիս, 7մ խորությունից	-	1.9	-	2.8	5.6	-	6.3
128	15 կմ Երանոս գյուղից 90° ազիմուտով, մակերևույթից	-	1.3	-	2.8	5.3	-	6.2
	15 կմ Երանոս գյուղից 90° ազիմուտով, 7մ խորությունից	-	-	-	3.1	5.4	1.2	6.5
	15 կմ Երանոս գյուղից 90° ազիմուտով, 25մ խորությունից	1.3	1.3	-	3.1	5.6	1.2	6.6
129	24 կմ Երանոս գյուղից 90° ազիմուտով, մակերևույթից	-	1.9	-	3.5	5.9	1.2	6.7
	24 կմ Երանոս գյուղից 90° ազիմուտով, 7մ խորությունից	-	1.9	-	2.9	5.6	1.2	6.4
	24 կմ Երանոս գյուղից 90° ազիմուտով, 20մ խորությունից	-	1.7	-	2.8	5.6	1.2	6.4
130	7 կմ Նորատուս գյուղից դեպի հյուսիս-արևմուտք, մակերևույթից	-	1.4	-	3.2	5.4	1.2	6.8
	7 կմ Նորատուս գյուղից դեպի հյուսիս-արևմուտք, 7մ խորությունից	-	1.3	-	2.9	5.6	1.2	6.9

Դիտակետի համար	Դիտակետի տեղադրություն	Կոնցենտրացիաների գերազանցումը ՍԹԿ-ից (անգամ)						
		ԹԿՊ, ՍԹԿ=3 սգ/լ	ԹՔՊ, ՍԹԿ=30 սգ/լ	Պղինձ, ՍԹԿ=0,001 սգ/լ	Քրոմ, ՍԹԿ=0,001 սգ/լ	Վանադիում, ՍԹԿ=0,001 սգ/լ	Մագնեզիում, ՍԹԿ=40 սգ/լ	Սելեն, ՍԹԿ=0,001 սգ/լ
130	7 կմ Նորատուս գյուղից դեպի հյուսիս-արևմուտք, 20մ խորությունից	-	-	-	2.5	5.6	1.2	6.7
	7 կմ Նորատուս գյուղից դեպի հյուսիս-արևմուտք, 30մ խորությունից	1.3	-	-	2.7	5.8	1.2	6.5
131	7.5 կմ Չկալովկա գյուղից դեպի հյուսիս, մակերևույթից	-	-	-	2.5	5.3	-	6.4
	7.5 կմ Չկալովկա գյուղից դեպի հյուսիս, 7մ խորությունից	1.3	-	-	3.1	5.5	1.2	7.0
	7.5 կմ Չկալովկա գյուղից դեպի հյուսիս, 25մ խորությունից	1.4	1.3	-	2.8	5.4	1.2	6.8

Ծաղկաձորում շրջակա միջավայրի որակի մոնիթորինգ



Օդային ավազան

Ծաղկաձոր քաղաքում կատարվում են ընդհանուր փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում է ակտիվ նմուշառման մեկ դիտակայան և պասիվ նմուշառման 14 դիտակետ:

Ակտիվ նմուշառման եղանակով վերցվել է օդի 271, պասիվ նմուշառման եղանակով՝ 363 փորձանմուշ: 2017թ. 2-րդ եռամսյակում վերցվել է նաև հողային ծածկույթի 10 փորձանմուշ՝ հողի ծանր մետաղներով աղտոտվածության գնահատման նպատակով:

Մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի և ազոտի երկօքսիդների կոնցենտրացիաների փոփոխությունները (ակտիվ նմուշառում).



Տանձադրյուր գետի ջրի քիմիական որակը 2017թ. 2-րդ եռամսյակում

2017թ. 2-րդ եռամսյակում Տանձադրյուր գետի վերին հոսանքում ապրիլ և հունիս ամիսներին ջուրը գնահատվել է «միջակ» որակի (3-րդ դաս), մայիսին՝ «լավ» որակի (2-րդ դաս): Ծաղկաձոր քաղաքից ներքև հատվածում ապրիլին ջուրը գնահատվել է «վատ» որակի (5-րդ դաս), մայիսին՝ «միջակ» որակի (3-րդ դաս), հունիսին՝ «անբավարար» որակի (4-րդ դաս):

Ապրիլ

Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
Հրազդան	Տանձադրյուր	Ծաղկաձոր քաղաքից վերև (311)	Մանգան, երկաթ, ալյումին	3-րդ	3-րդ
		Ծաղկաձոր քաղաքից ներքև (312)	ԹԿՊ5, ֆոսֆատ իոն, երկաթ, ալյումին	3-րդ	5-րդ
			մանգան	5-րդ	

Մայիս

Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
Հրազդան	Տանձադրյուր	Ծաղկաձոր քաղաքից վերև (311)	—	2-րդ	2-րդ
		Ծաղկաձոր քաղաքից ներքև (312)	Վանադիում, երկաթ, ալյումին	3-րդ	3-րդ

Հունիս


Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
Հրազդան	Տանձադրյուր	Ծաղկաձոր քաղաքից վերև (311)	Մանգան, երկաթ, ալյումին	3-րդ	3-րդ
		Ծաղկաձոր քաղաքից ներքև (312)	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, վանադիում երկաթ, ալյումին	3-րդ	4-րդ
			մանգան	4-րդ	

Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը (պասիվ նմուշառում)




Պայմանանշաններ



-  Պասիվ նմուշառման դիտակետեր
-  Ակտիվ նմուշառման դիտակետեր
-  Գետային ցանց
-  Հանապարհներ և փողոցներ
-  Բնակավայրերի սահման




Ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը ($մգ/մ^3$)




Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը (պասիվ նմուշառում)





- Պայմանանշաններ**
-  Պասիվ նմուշառման դիտակետեր
 -  Ակտիվ նմուշառման դիտակետեր
 -  Գետային ցանց
 -  Ճանապարհներ և փողոցներ
 -  Բնակավայրերի սահման



Ազոտի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը ($մգ/մ^3$)




ՏԱՆՁԱՂԲՅՈՒՐ ԳԵՏԻ ՋՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ՈՐԱԿԸ



- ՊԱՅՄԱՆԱՆՇԱՆՆԵՐ**
- Գետային ցանց
 - Լճեր և ջրամբարներ
 - Բնակավայրեր

Մակերևութային ջրերի որակի դասեր

- 2-րդ դաս
- 3-րդ դաս
- 4-րդ դաս
- 5-րդ դաս



Մթնոլորտային տեղումներ

2017թ. 2-րդ եռամսյակի ընթացքում Ծաղկաձորում վերցվել է տեղումների 17 (15 անձրև, 2 կարկտային անձրև) փորձանմուշ: Վերցված փորձանմուշներում որոշվել են ջրի որակի 35-ական ցուցանիշ: Որոշված ցուցանիշներից մի մասի կոնցենտրացիաները ստորև բերվում են աղյուսակի տեսքով.

Ամսաթիվ	Ցուցանիշներ						
	Ջրածնային ցուցիչ	Էլեկտրահաղորդականություն (մկՍմ/սմ)	Սուլֆատ իոն (մգ/լ)	Քլորիդ իոն (մգ/լ)	Նիտրատ իոն (մգ/լ)	Ֆտորիդ իոն (մգ/լ)	Սմոնիում իոն (մգ/լ)
8-9.04.17	7.05	76.2	6.53	0.93	4.35	<0.015	2.56
10-11.04.17	6.73	23.4	1.66	0.89	1.06	<0.015	0.91
14-15.04.17	7.01	42	2.92	0.58	2.22	<0.015	1.26
17-18.04.17	6.68	26.6	1.54	0.35	2.13	<0.015	1.76
24-25.04.17	7.27	79	7.34	1.19	4.22	<0.015	3.51
29-30.04.17	6.72	39	3.19	0.77	3.88	<0.015	1.66
2-3.05.17	6.98	50.9	4.61	0.85	3.40	0.09	1.90
3-4.05.17	6.65	20.1	1.68	0.30	1.51	0.02	0.93
6-7.05.17	6.43	8.3	0.70	0.16	0.77	<0.015	0.66
8-9.05.17	7.08	38.2	3.12	0.59	2.77	0.02	1.76
15-16.05.17	6.46	21.5	1.64	0.79	1.18	0.01	0.95
20-21.05.17	7.87	115.4	5.19	0.94	2.49	0.13	2.71
23-24.05.17	6.84	29.7	1.65	0.63	1.27	0.10	0.93
24-25.05.17	6.81	22.4	1.16	0.23	0.71	<0.015	0.40
28-29.05.17	6.94	36.5	2.80	0.54	1.48	<0.015	1.19
16-17.06.17	6.80	19.4	1.39	0.39	1.50	<0.015	0.76
17-18.06.17	7.02	23.5	1.73	0.29	1.66	<0.015	1.52

«Եվրոպայի մեծ հեռավորությունների վրա անդրսահմանային աղտոտիչների տարածման դիտարկումների և գնահատման համատեղ ծրագիր (EMEP)»

Օդային ավազան

Ամբերդի կայանում 2017թ. 2-րդ եռամսյակում վերցվել է օդի 263 և փոշու 88 փորձանմուշ:

Օդի փորձանմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, ամոնիակի և նիտրատ իոնի, իսկ փոշու փորձանմուշներում՝ քլորիդ, նիտրատ, սուլֆատ, ամոնիում իոնների և 21 քիմիական տարրի պարունակությունները: Ավտոմատ եղանակով գետնամերձ օդոնի պարունակության որոշման համար կատարվել է օդի 1876 դիտարկում:

Ազոտի երկօքսիդի և ամոնիակի միջին ամսական կոնցենտրացիաները ՍԹԿ-ները չեն գերազանել ($ՍԹԿ_{\text{միջ.}}=0.04\text{մգ/մ}^3$):

Մթնոլորտային տեղումներ

2017թ. 2-րդ եռամսյակի ընթացքում Ամբերդում վերցվել է 18 (2 ձյան և 16 անձրևի) փորձանմուշ: Վերցված փորձանմուշներում որոշվել են 35-ական ցուցանիշ: Որոշված ցուցանիշներից մի մասի կոնցենտրացիաները ստորև բերվում են աղյուսակի տեսքով.

Ամսաթիվ	Ցուցանիշներ						
	Զրաձնային ցուցիչ	Էլեկտրահաղորդականություն (մկՍմ/սմ)	Սուլֆատ իոն (մգ/լ)	Քլորիդ իոն (մգ/լ)	Նիտրատ իոն (մգ/լ)	Ֆտորիդ իոն (մգ/լ)	Ամոնիում իոն (մգ/լ)
1.04.17	6.34	5.5	0.25	0.07	0.35	<0.015	0.51
2.04.17	6.82	13.4	0.97	0.07	0.80	<0.015	0.83
7.04.17	6.66	65	9.34	0.91	8.76	<0.015	3.04
10.04.17	5.90	6.5	0.60	0.26	0.33	<0.015	0.34
13-14.04.17	6.91	36.1	4.16	0.39	2.51	<0.015	1.61
14-15.04.17	6.80	19.9	1.70	0.40	1.52	<0.015	1.42
18-95.04.17	6.92	29.8	3.10	0.31	3.73	<0.015	2.57
24.04.17	7.47	113.6	12.35	1.37	5.72	<0.015	2.69
2-3.05.17	46.1	7.0	5.24	0.74	0.35	0.015	1.85
3.05.17	31.8	6.5	2.45	0.25	0.80	<0.015	1.84
5-6.05.17	13.3	6.6	1.97	0.20	8.76	<0.015	1.03
6.05.17	14.4	7.5	1.44	0.16	0.33	0.017	1.17
7.05.17	11.4	6.6	1.24	0.19	2.51	<0.015	0.77
15.05.17	29.6	6.8	2.19	0.29	1.52	0.014	0.85
21.05.17	27.2	7.2	0.59	0.13	3.73	0.012	0.71
23-24.05.17	17.1	6.9	0.97	0.20	5.72	0.015	0.72
17.06.17	22.6	6.9	1.53	0.15	1.74	<0.015	1.54
22.06.17	31.4	6.9	2.45	0.51	3.04	<0.015	1.18

Հավելված 1

ՀՀ գետերի ջրի քիմիական որակը 2017թ. 2-րդ եռամսյակում

Ապրիլ

Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս	
Հյուսիսային	Փամբակ	0,5 կմ գլ.Հարթազյուղից վերև (1)	Երկաթ, ալյումին, ԿՆ	3-րդ	3-րդ	
		0,5 կմ ք. Սպիտակից ներքև (2)	Նիտրատ իոն, ԿՆ	3-րդ	3-րդ	
		0,6 կմ ք. Վանաձորից վերև (3)	Նիտրատ իոն, ԿՆ	3-րդ	3-րդ	
		4,5 կմ ք. Վանաձորից ներքև (4)	Ամոնիում իոն, նիտրատ իոն, ԸԱԱ, ԿՆ	3-րդ	3-րդ	
	Դեբեդ	0,5 կմ Մարցիգետ գետի թափման կետից ներքև (5)	ԹՔՊ, ԿՆ	3-րդ	3-րդ	
			0,5 կմ ք. Այրումից վերև (6)	Երկաթ	3-րդ	4-րդ
				Մոլիբդեն, ԿՆ	4-րդ	
		Սահմանի մոտ (7)	Երկաթ	3-րդ	4-րդ	
	Մոլիբդեն, ԿՆ		4-րդ			
	Չորագետ	0,5 կմ ք. Ստեփանավանից վերև (8)	-	2-րդ	2-րդ	
	Տաշիր	0,5 կմ գլ. Միխայելովկայից վերև (11)	-	2-րդ	2-րդ	
			0,5 կմ գլ. Սարատովկայից ներքև (12)	Նիտրատ իոն, ֆոսֆատ իոն, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	3-րդ
		Մարցիգետ	Գետաբերան (13)	-	2-րդ	2-րդ

Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս								
Հյուսիսային	Ախթալա	Գետաբերան (14)	Մուլիբդեն, երկաթ, բերիլիում, ալյումին, ՇԼԱ, ԿՆ	3-րդ	5-րդ								
			Կոբալտ, սուլֆատ իոն	4-րդ									
			Ցինկ, պղինձ, կադմիում, մանգան	5-րդ									
	Գառգառ	Ակունք (210) Գետաբերան (342)	–	2-րդ	2-րդ								
			Ֆոսֆատ իոն	3-րդ	3-րդ								
	Շնող	Գետաբերան (343)	ԹԿՊ ₅ , ԹՔՊ, նիտրիտ իոն, բերիլիում, ալյումին, սուլֆատ իոն	3-րդ	5-րդ								
			Երկաթ	4-րդ									
			Մուլիբդեն, ԿՆ	5-րդ									
	Աղստև	1,2 կմ ք. Դիլիջանից վերև (15)	ԹԿՊ ₅	3-րդ	3-րդ								
						0,5 կմ ք. Դիլիջանից ներքև (16)	ԹԿՊ ₅	3-րդ	3-րդ				
										1 կմ ք. Իջևանից վերև (17)	ԹԿՊ ₅	3-րդ	3-րդ
		Գետիկ	0,5 կմ ք. Ճամբարակից վերև (19)	Երկաթ, ալյումին	3-րդ	3-րդ							
			Գետաբերան (20)	ԹԿՊ ₅ , երկաթ, ալյումին	3-րդ	3-րդ							
		Ախուրյանի	Ախուրյան	1 կմ գյ. Ամասիայից ներքև (32)	ԹՔՊ, նիտրիտ իոն, ՇԼԱ, ԿՆ	3-րդ	5-րդ						
Ամոնիում իոն, ընդհանուր ֆոսֆոր	4-րդ												
Ֆոսֆատ իոն	5-րդ												

Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս	
Ախուրյանի կառավարման տարածք	Ախուրյան	0,8 կմ ք. Գյումրիից վերև (33)	Ամոնիում իոն, Ֆոսֆատ իոն, երկաթ, ընդհանուր ֆոսֆոր, ԿՆ	3-րդ	3-րդ	
		5 կմ ք. Գյումրիից ներքև (34)	ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրատ իոն, ֆոսֆատ իոն, մոլիբդեն, ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր, ԿՆ	3-րդ	3-րդ	
		0,5 կմ գյ. Երվանդաշատից ներքև (35)	ԹՔՊ	3-րդ	3-րդ	
	Աշոցք	0,5 կմ գյ. Արտաշենից վերև (36)	-	2-րդ	2-րդ	
		Գետաբերան (37)	Մանգան, երկաթ, ընդհանուր ֆոսֆոր, ԿՆ	3-րդ	3-րդ	
	Ախուրյանի	Կարկաչուն	Գետաբերան (38)	Մանգան, կալիում, նատրիում, ԸԼԱ, ԿՆ	3-րդ	5-րդ
